

րոս և Ս. Յովհաննէս իրենց կողմէ Սամարիոյ այցելութիւն տալէ վերջ. «Եւ ի բազում գեօղս Սամարացւոցն աւետարանէին» (Գործք. Ը. 25): Միեւնոյն թուականին մուտք գտաւ քրիստոնէութիւնը Նապլուսի մէջ, որ ծնունդ տուաւ Յուսափնոսի՝ երկրորդ դարու քրիստոնէութեան մեծ ջատագովին: Դ. դարուն հոն հաստատուեցաւ եպիսկոպոսութեան մը աթոռը:

636 ին Նապլուսը մտաւ իսլամներու լուծին տակ և 1100 ին Սալադինները տիրեցին անոր: 1120 ին սինոդ մը գումարուեցաւ հոն: 1184 ին Սալաէտտին աւարառութեան տուաւ քաղաքը և 1187 ին տիրացաւ անոր: 1202 ին Նապլուս երկրաշարժէ մը քանդուեցաւ և միայն Սամարացիներու թաղը ազատ մնաց:

Այս պատմական հակիրճ ծանօթագրութենէն վերջ լիշէնք աւանդութիւնները.

D'Arvieux 1659 ի իր Ուղեգրութեան մէջ կը ծանօթագրէ. «Նապլուսի հակառակ կողմը, լերան ստորոտը տակաւին կը տեսնուին մատուռի մը աւերակները: Տեղացիք այստեղ կուռք կը պաշտէին և քաղաքին հիւսիսային կողմը ցոյց կը տրուի ցարդ այնտեղը՝ ուր մեր Փրկիչը հանգիստ առաւ, երբ ճանապարհէն յոգնած էր: Ժայռին մէջ բարձի ձևով փորուածք մը կը տեսնուէր ոտքի և ձեռքի նշաններով, ինչպէս նաև տարածուած մարմինի մը պատկերը, որ ըստ աւանդութեան, Տիրոջ պատկերը կը կարծուի տպաւորուած ըլլալ, երբ հոն կը հանգչէր» (R. Bl. 1923, էջ 128-129):

Սալադինի և իր զորքերի նապրուսի մէջ. — Սալաէտտին երբ Նապլուսը գրաւեց, եկեղեցիներուն տիրացաւ և զանոնք մզկիթի վերածեց. նոյն գրաւուած